ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1958 Общественные науки

Ա. Եղիազարյան

Վ. Ի. ԼԵՆԻՆՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ-ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԸ

ԼԵՆԻՆԻ ՏԵՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Մեծ Լենինը՝ ստեղծելով Կոմունիստական պարտիայի կուռ ուսմունքը ազգային-գաղութային հարցի վերաբերյալ, զարգացրել և հարստացրել է մարքսիզմը պատմական նոր պայմաններին համապատասխան։ Լենինը վերլուծման է ենթարկել մոնոպոլիստական կապիտալիզմը՝ իմպերիալիզմը, հիմնավորել է նոր դարաշրջանի պայմաններում կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի, սոցիալիստական ռևոլյուցիայի տեսությունը և այդ տեսության բաղկացուցիչ մասը ազգային հարցի ու ազգային-ազատագրական շարժումների ամբողջական ու ներդաշնակ ուսմունքը։

Այդ ուսմունքն իր արտահայտությունն է գտել Լենինի մի շարք հիմնական աշխատություններում, ինչպիսիք են «Ազգային հարցը մեր ծրագրում» (1903), «Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին» (1913), «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» (1914), «Սոցիալիստական ռևոլյուցիան և ազգերի ինքնորոշման իրավունքը» (1916), «Յունիուսի բրոշյուրի մասին» (1916), «Ինքնորոշման վերաբերյալ դիսկուսիայի արդյունքները» (1916), «Մարքսիզմի ծաղրանկարի և «իմպերիալիստական էկոնոմիզմի» մասին» (1916), «Վիճակագրությունը և սոցիոլոգիան» (1917), նաև պարտիայի 8-րդ համագումարում (1919) և Կոմինտերնի 2-րդ կոնգրեսում (1920) տված զեկուցումների մեջ։

Ազգային-գաղութային հարցին նվիրված Լենինի աշխատությունների, ինչպես վերը հիշատակված, նույնպես և բազմաթիվ այլ հոդվածների, նամակների, ելույթների ժողովածուն կազմում է 785 էջից բաղկացած մի ստվար հատոր, որը վերջերս հայերեն լույս տեսավ Հայպետհրատի հրատարակությամբ[1]։

Ազգային հարցին Լենինը մոտենում է պատմականորեն և պրոլետարիատի դասակարգային շահերի, սոցիալիզմի հաղթության շահերի դիրքերից։ Այդ կոնկրետ-պատմական և դասակարգային մոտեցման մեթոդը Լենինը հետևողականորեն կիրառում է ազգերի ծագումը ուսումնասիրելիս, տարբեր դարաշրջաններում ազգային շարժման առաջացումը վերլուծելիս (ֆեոդալիզմից կապիտալիզմի անցման շրջան և կապիտալիզմի կործանման շրջան), սոցիալիստական ազգերի առաջացումը ու նրանց զարգացման հեռանկարները քննարկելիս։

Ազգային հարցի լենինյան ուսմունքը հաջող քննություն բռնեց պատմության առաջ և միակ ճշմարիտը դուրս եկավ, շնորհիվ Լենինի կիրառած գիտական մեթոդի, պատմական և դասակարգային մոտեցման, շնորհիվ այն մարքսիստական դրույթի, որ պրոլետարիատի շահերը համընկնում են պատմական զարգացման օբյեկտիվ ընթացքին։

---

[1] Վ. Ի. Լենին, *Ազգային և ազգային-գաղութային հարցի մասին*, Երևան, 1957։

Լենինը չի ընդունում ազգի ձևական, մետաֆիզիկական, իրավաբանական սահմանումը։ Հարցի էությունը դրանում չի կայանում, այլ, ինչպես Լենինն է ասում, ամբողջ աշխարհի ազգային շարժումների պատմա-տնտեսական ուսումնասիրության մեջ։

Այդ բնավ չի նշանակում, որ Լենինը խուսափել է երևույթների սահմանումը, բնորոշումը տալուց,— ո՛չ երբեք։ Հետևելով Մարքսին ու Էնգելսին, Լենինը տալիս է սոցիալական երևույթների կոնկրետ-պատմական, ճշգրիտ, բազմակողմանի, ըստ հնարավորության բոլոր կողմերի սպառիչ բնորոշումը։ Սակայն այդ բնորոշումներն ու սահմանումները երևույթների ուսումնասիրության, վերլուծության հետևանքն են և ոչ թե ելակետ, սկզբնադրույթ։

Ուսումնասիրելով ազգային հարցի մասին Լենինի աշխատությունները, որտեղ բացահայտված են ազգային շարժումների ծագումը, ընթացքը, հեռանկարները և վախճանը, դուք անշուշտ հանդում եք այն բանին, որ ազգը՝ դա պատմականորեն ստեղծված մարդկանց մի կայուն ընդհանրություն է։ Այդ կայուն ընդհանրությունն ստեղծվել է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և հոգեկան կերտվածքի (կուլտուրայի) բազայի վրա։

Ժամանակակից ազգերը ծնունդ են պատմական որոշ դարաշրջանի և հասարակական հարաբերությունների զարգացման որոշ աստիճանի։ Ո՞րն է այդ դարաշրջանը։ «Ամբողջ աշխարհում ֆեոդալիզմի դեմ կապիտալիզմի տարած վերջնական հաղթանակի շրջանը կապված է ազգային շարժումների հետ»[1]։ Այդ շարժումների հիմքն էր զարգացող, ծավալվող ապրանքային տնտեսությունը, ներքին շուկայի նվաճումը աճող բուրժուազիայի կողմից, ֆեոդալական անջատ-անջատ տերիտորիաների վրա ապրող և մի լեզվով խոսող ազգաբնակության համախմբումը մի պետության շրջանակներում՝ բուրժուազիայի գլխավորությամբ։ Ահա թե ինչու ազգային պետությունների գոյացումը հանդիսանում էր ամեն մի ազգային շարժման տենդենցը՝ և դա պատմականորեն պրոգրեսիվ երևույթ էր։

XVII—XIX դարերի ընթացքում ազգային պետություններ են կազմակերպվում Արևմտյան Եվրոպայի տերիտորիայի վրա, ըստ որում այդ պետությունները որպես կանոն ունեն ազգային մաքուր կազմ։ Օրինակ՝ Իտալիայի, Հոլանդիայի, Պորտուգալիայի, Շվեդիայի, Նորվեգիայի ազգաբնակության 99%-ը պատկանում է միևնույն ազգության, Իսպանիայում և Դանիայում՝ 96%-ը, դրեթե մաքուր ազգային կազմ ունեն Ֆրանսիան, Անգլիան (չհաշված Իռլանդիան) և Գերմանիան (չհաշված այն ժամանակվա լեհերին — 5,47% և Էլզաս-Լոթարինգիան — 1,8%)։ Հեռավոր Արևելքում Ճապոնիայի ազգային կազմը միանգամայն մաքուր է՝ 99%-ը ճապոնացիներ, իսկ Հեռավոր Արևմուտքում՝ ԱՄՆ-ում 89%-ը ամերիկացիներ են և միայն 11%-ը նեգրեր։ Այդ նույն Արևմտյան Եվրոպայում խառն ազգային կազմով, բայց ազգային լրիվ իրավահավասարությամբ երկու պետություններ գոյություն ունեն՝ Շվեյցարիան և Բելգիան։

Իր չափազանց ուշադրավ «Վիճակագրությունը և սոցիոլոգիան» աշխատության մեջ Լենինը բնորոշում է պետությունների վերոհիշյալ խումբը, որպես տնտեսապես, քաղաքականապես, կուլտուրապես առավել զարգացած առաջավոր կապիտալիստական երկրներ, որտեղ ազգային անհավասարությունը,

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 492—493։

որպես հատուկ քաղաքական երևույթ, միանգամայն աննշան դեր է խաղում, եթե չհաշվենք նեգրերին—Ամերիկայում։

Սակայն այս պետությունների մեծամասնության համար հատկանշական կողմն այն է, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին կլասիկ կապիտալիզմից իմպերիալիզմի փոխարկման շրջանում նրանք առաջ ընթացան գաղութային քաղաքականության ասպարեզում։ 1914 թ. տվյալներով, նշում է Լենինը, ողջ երկրագնդի ազգաբնակությունը հաշվվում էր 1.657 միլիոն մարդ, որից գաղութային և կիսագաղութային երկրների ազգաբնակությունը կազմում էր շուրջ մեկ միլիարդ մարդ և այդպիսով երկրագնդի ազգաբնակության 2/3 մասը կազմող ազգերը ճնշված ու հարստահարված ազգեր էին մի խումբ զարգացած կապիտալիստական ազգերի կողմից։ Եթե վերջիններիս բուն տերիտորիան (մետրոպոլիան) հավասար էր 16,5 միլիոն քառակուսի կիլոմետրի, ապա գաղութներում նրանք տիրում էին մետրոպոլիայից 4 անգամ ավելի տարածության, որը կազմում էր 65 միլիոն քառակուսի կիլոմետր։

Եթե Անգլիայի մետրոպոլիայի ազգաբնակության թիվը հավասար էր 46 միլիոնի, ապա գաղութներում նա իշխում էր 393 միլիոն բնակչություն ունեցող տարբեր ազգերի վրա։

Ի՞նչ էր ներկայացնում Արևելյան Եվրոպան այն ժամանակ։ Երեք մեծ պետությունների՝ ցարական Ռուսաստանի, Ավստրիայի և Թուրքիայի տիրապետող ազգությունների (վելիկոռուսների, ավստրիացիների և թուրքերի) թիվը կազմում էր միայն 43%, իսկ ազգաբնակության կեսից ավելին, այսինքն 57%-ը կազմում էին այլազգիներ, որոնք ենթակա էին ճնշման՝ գերիշխող ազգերի կողմից։

Ճնշող և ճնշված ազգեր թե՛ Արևելյան Եվրոպայում և թե՛ Ասիայում, Աֆրիկայում, Ավստրալիայում, Ամերիկայում — ահա՛ պատմական ռեալ իրականությունը։

Ի՞նչ հետևություն է անում Լենինը պատմական այս իրադրությունից։

Ի տարբերություն բուրժուական պացիֆիզմի, մանրբուրժուական ուտոպիստական երազանքների, ի տարբերություն ազգային հարցի ոչ միայն Կաուտսկու հարցադրման, այլև Լյուքսեմբուրգի, Կարլ Ռադեկի, Պյատակովի, Բուխարինի հարցադրման, Լենինը գտնում է, որ ազգային հարցում սոցիալ-դեմոկրատիայի ծրագրի «կենտրոնական տեղը պետք է լինի ազգերի հենց այն բաժանումը՝ կեղեքողների և կեղեքվողների, որն իմպերիալիզմի էությունն է»[1]։

Լենինը, բոլշևիկները միշտ էլ շեշտել են, որ իմպերիալիզմի ժամանակ անխուսափելի է ազգերի բաժանումը ճնշող և ճնշված ազգերի։ «Մենք ընդգծում ենք այդ տարբերությունը ի հակադրություն 2-րդ ինտերնացիոնալի և բուրժուական դեմոկրատիայի» —ասում է Լենինը։

1903 թ. պարտիայի ծրագրի ազգային ինքնորոշման իրավունքի պահանջը հիմնավորելիս Լենինը ընդգծում է, որ պրոլետարիատը, նրա պարտիան չի կարող անտարբեր լինել դեպի ազգային ճնշումը և ազգային-աղատագրական պայքարը։

Ազգային ճնշումը, բռնությունը ստեղծում է ճնշված, հարստահարված ազգերի պրոլետարիատի և աշխատավոր մասսաների մեջ խոր անվստահու-

---

[1] Վ. Ի. Լենին, հատ. 21, էջ 519։

[2] Նույն տեղում, հատ. 31, էջ 289։

թյուն դեպի ճնշող, մեծապետական ազգի պրոլետարիատը։ Այսպիսով, մթագնվում է երկուստեք պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը, հարված հասցվում նրա կազմակերպվածությանը, ջլատվում են պրոլետարիատի, աշխատավոր մասսաների ուժերը, վնասվում նրա համերաշխությունը, թուլանում նրա պայքարը թե՛ «իր» և թե՛ ճնշող բուրժուազիայի դեմ։ Այսպիսով, վերջին հաշվով թուլանում է սոցիալիզմի համար մղվող պրոլետարիատի դասակարգային պայքարը թե՛ տվյալ պետության սահմաններում, թե՛ միջազգային մասշտաբով։

Ելնելով միջազգային սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի շահերից, Լենինը դեռևս առաջին պատերազմից առաջ՝ 1914 թ. փետրվարին ընդգծել է, որ «սոցիալիստների տեսակետից անպայմանորեն սխալ է ազգային ճնշման պայմաններում անտեսել ազգային ազատագրության խնդիրները»[1]։

Լենինը սիրում էր կրկնել Մարքսի հայտնի արտահայտությունը. «Չի կարող ազատ լինել այն ժողովուրդը, որն ինքը ճնշում է ուրիշ ժողովրդի»։ Այլ խոսքով, չեն կարող ազատագրվել մեծ ժողովուրդները, եթե նրանք չնպաստեն ճնշված ժողովուրդների ազատագրմանը։

Ահա թե ինչու պրոլետարիատի պարտիան պետք է հետևողականորեն պայքարի ազգային ճնշման դեմ, և իր ծրագրում ազդարարի ազգերի ինքնորոշման իրավունքը մինչև տվյալ պետությունից անջատումը։

1916 թ. «Սոցիալիստական հեղափոխությունը և ազգերի ինքնորոշման իրավունքը» թեզիսներում Լենինը անհրաժեշտ է համարում ինքնորոշման կապակցությամբ տարբերել երկրների երեք խումբ կամ երկրների երեք տիպ։

Առաջին խումբը Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի Միացյալ Նահանգներն են, որտեղ ազգային շարժումները վաղուց ավարտված են և անդարձորեն անցյալին են պատկանում։ Երկրորդ տիպը Արևելյան Եվրոպական երկրներն են (մասնավորապես Ավստրիան, Ռուսաստանը), որտեղ ազգային շարժումները զարգանում, ծավալվում են, և, վերջապես, երրորդ տիպը կիսագաղութներն ու գաղութներն են, որտեղ ազգային շարժումները մասամբ նոր են սկսվել և զգալի չափով ապագային են պատկանում։

Վերին աստիճանի նշանակալից է և ուշագրավ Լենինի մի արտահայտությունը. «Ինքնորոշումը» միշտ առաջադրվում է երկու ազգերի՝ ճնշված և ճնշող ազգերի «համար»[2]։

Ճնշող ազգերի պրոլետարիատի, նրա պայքարի ինտերնացիոնալ պարտականությունն է հետևողական կերպով քարոզել և պաշտպանել ճնշվող ազգերի, երկրների իրավահավասարությունը, անջատման ազատությունը։

«Մենք իրավունք ունենք և պարտավոր ենք քամահրել ճնշող ազգի ամեն մի սոցիալ-դեմոկրատի որպես իմպերիալիստի և որպես սրիկայի, եթե նա այդպիսի պրոպագանդա չի մղում»[3]։

Ճնշվող ազգի պրոլետարիատի, նրա պարտիայի ինտերնացիոնալ պարտականությունն է պայքարել ազգային նեղմտության դեմ, ազգային առանձնացվածության դեմ, ինքնամփոփվածության դեմ։ Նա ագիտացիայի ծանրության կենտրոնը պետք է դնի «ազգերի կամավոր միացում»-ի վրա, իր դասակարգի

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 540։
[2] Նույն տեղում, հատ. 23, էջ 74։
[3] Նույն տեղում, հատ. 22, էջ 467։

մասնավոր շահերը ենթարկի պրոլետարիատի շարժման ընդհանուր շահերին, որի հաջող լուծումից է կախված նաև իր երկրի պրոլետարիատի պայքարի հաջողությունը։

Բռնության և ճնշումներից ազատագրված ազգերը, բնականաբար, կձգտեն միավորվելու, բայց արդեն ոչ թե բռնի ուժի հիման վրա, բռնապետական ռեժիմի շնորհիվ, այլ ազատ կամքով, գիտակցելով իրենց տնտեսական և քաղաքական շահերը։

Դա նույնպես պատմական տենդենց է, բայց ողջունելի և իրոք պրոգրեսիվ պատմական տենդենց, որը ստեղծում է ազատագրված, իրավազոր, իրավահավասար ազգությունների մեծ միավորումներ։

Ազգերի ինքնորոշման իրավունքը, նրանց անջատման ազատության հարցը անթույլատրելի է խառնել անջատման նպատակահարմարության հարցի հետ այս կամ այն ազգի նկատմամբ, այս կամ այն մոմենտին։

Անջատման հարցը պրոլետարիատի պարտիան պետք է որոշի ամեն մի առանձին դեպքում ինքնուրույն կերպով,— սովորեցնում էր Լենինը,— ելակետ ունենալով պրոլետարիատի դասակարգային կռվի շահերը, սոցիալիզմի հաղթանակի ընդհանուր շահերը։

Պետք է նշել, որ Լենինի աշխատություններում ազգային հարցը նույնպես իր զարգացման շրջաններն է ունեցել։ Կարելի է մատնանշել երկու շրջան. մինչև 1916 թ. և դրանից հետո։ Ինչո՞վ են տարբերվում այդ շրջանները միմյանցից։ Ոչ թե նրանով, որ ազգային հարցում սկզբունքային տարբեր երկու մոտեցում ունենք։ Ո՛չ, երբեք։ Այդ տեսակետից պետք է ամենայն ուժգնությամբ ընդգծել, որ Լենինի ազգային հարցի ուսմունքի բնորոշ, հատկանշական կողմն է — նրա հետևողական սկզբունքայնությունը։ Ազգերի իրավահավասարությունը, նրանց ինքնորոշման իրավունքը, նրանց անջատման ազատությունը, ճնշող և ճնշվող ազգերի ռևոլյուցիան մարքսիստների ինտերնացիոնալ պարտավորությունները, ազգերի ազատագրումը՝ այս բոլոր գաղափարներով տոգորված մեր պարտիայի ազգային հարցի ծրագիրը մնաց անհողդողդ, անդրդվելի։

Սակայն, եթե մինչև 1916 թ. փոքր ազգությունների մասին խոսելիս գերազանցապես նկատի էին առնում Արևելյան Եվրոպայի ճնշված ազգերը, ապա 1916 թ. հետո, շնորհիվ գաղութային երկրներում սկսվող և ծավալվող ազգային-ազատագրական, ազգային-ռևոլյուցիոն շարժումների, որոնք իրենց մեջ ընդգրկում էին միլիոնավոր մասսաներ, ազգային հարցի լենինյան ուսմունքը զարգացավ, խորացավ, հարստացավ և ընդգրկեց գերազանցապես այդ երկրների ազգային ազատագրական շարժումները։ Այլ խոսքով՝ Լենինի ազգային հարցի ուսմունքի զարգացումը արտահայտությունն էր այդ հարցի օբյեկտիվ-պատմական զարգացման. տեսությունը համապատասխան կերպով արձագանքում էր իրական կյանքում տեղի ունեցող երևույթներին — այդ է Լենինի ազգային հարցի ուսմունքի պատմական կենսունակությունը։

1916 թ. «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» իր կլասիկ աշխատության մեջ Լենինը հիմնավորեց կապիտալիզմի տնտեսական և քաղաքական անհամաչափ զարգացման օրենքը իմպերիալիզմի դարաշրջանում։

Այստեղից էլ բխում է սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը մեկ՝ առանձին վերցրած երկրում։ Սա մեր պարտիայի տեսական խոշոր նվաճումն էր։

Սակայն, սահմանափակվել միայն դրանով, սխալ կլինի։ Իմպերիալիզմի դարաշրջանում կապիտալիզմի տնտեսական և քաղաքական զարգացման անհամաչափության օրենքի իրականացումից, նրա բնույթից բխում է ոչ միայն մի երկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը, այլև բխում են ազգային ազատագրական շարժումները, ազգային ռևոլյուցիոն շարժումները, որոնք կապակցվելով պրոլետարիատի քաղաքացիական կռվին, միասին կազմում են մի ողջ դարաշրջան՝ սոցիալիստական ռևոլյուցիայի դարաշրջանը։ Ազգային ռևոլյուցիոն շարժումները կազմում են սոցիալիստական, պրոլետարական ռևոլյուցիայի բաղկացուցիչ մասը։ Այդ մասին մենք ունենք Լենինի սպառիչ հայտարարությունը։ Իր «Մարքսիզմի ծաղրանկարի և «իմպերիալիստական էկոնոմիզմի» մասին» աշխատության մեջ Լենինը նշում է. «Սոցիալական ռևոլյուցիան չի կարող այլ կերպ տեղի ունենալ, քան իրրև մի դարաշրջան, որ միացնում է պրոլետարիատի քաղաքացիական կռիվը բուրժուազիայի դեմ առաջավոր երկրներում և մի ամբողջ շարք դեմոկրատական ու ռևոլյուցիոն, այդ թվում ազգային-ազատագրական շարժումներ, չզարգացած, հետամնաց և ճնշված ազգերի մեջ։

Ինչո՞ւ։ Որովհետև կապիտալիզմը անհամաչափ է զարգանում՝ և օբյեկտիվ իրականությունը ցույց է տալիս մեզ, որ բարձր զարգացած կապիտալիստական ազգերի կողքին կան մի ամբողջ շարք տնտեսապես շատ թույլ և բոլորովին չզարգացած ազգեր»[1]։

Նորը Լենինի մոտ նաև այն է, որ նա ազգային-գաղութային հարցը դիտում է որպես միջազգային պրոլետարական ռևոլյուցիայի ընդհանուր հարցի մի բաղկացուցիչ մաս։

Չի կարելի այսօր գրել միջազգային կամ սոցիալիստական ռևոլյուցիայի մարքս-լենինյան թեորիայի, ուսմունքի մասին և անտեսել ազգային-ազատագրական շարժումները, ազգային-գաղութային հարցը։ «Լիովին պարզվում է,— ասում է Լենինը,— որ ամբողջ աշխարհի համար մոտեցող սոցիալիստական ռևոլյուցիան ոչ մի կերպ չի կայանալու միայն ամեն մի երկրում պրոլետարիատի՝ իր բուրժուազիայի նկատմամբ տարած հաղթանակի մեջ»[2]։

«Ինքնին հասկանալի է,— շարունակում է Լենինը,— որ միայն աշխարհի բոլոր առաջավոր երկրների պրոլետարիատը կարող է վերջնականապես հաղթել, և մենք ռուսներս սկսում ենք այն գործը, որը անգլիական, ֆրանսիական կամ գերմանական պրոլետարիատը կամբացնի, բայց մենք տեսնում ենք, որ նրանք, առանց բոլոր ճնշված գաղութային ժողովուրդների և առաջին հերթին Արևելքի ժողովուրդների աշխատավոր մասսաների օգնության, չեն հաղթի։ Մենք մեզ պետք է հաշիվ տանք այն մասին, որ մենակ ավանդարդը չի կարող իրագործել անցումը դեպի կոմունիզմ»[3]։

Ի՞նչ նոր մոմենտներ է շեշտում Լենինը մեարոպոլիտների և գաղութների փոխհարաբերություններում, ճնշող, կեղեքող և ճնշված, կեղեքված ազգերի փոխհարաբերություններում։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 67։

[2] Նույն տեղում, հատ. 30, էջ 185։

[3] Նույն տեղում, էջ 189։

Անսահման շահագործում, քաղաքական իրավազրկություն, ասիմիլյացիոն քաղաքականություն՝ լեզվի, կուլտուրայի նկատմամբ, արհամարհանք և ատելություն, «եվրոպական նոզկալի շովինիզմ» գաղութային ժողովուրդների հանգեպ — ահա այդ հարաբերությունների էությունը։

Այդ տնտեսական, քաղաքական և գաղափարական ճնշման տակ է պահվում, իհարկե, ճնշվող ազգերի պրոլետարիատը և այդ ուղղությամբ ստեղծվում զգալի, շոշափելի տարբերություն ճնշող, իմպերիալիստական ազգերի պրոլետարիատի և ճնշվող ազգերի պրոլետարիատի միջև։

Ճնշող ազգերի պրոլետարիատի որոշ մասերը օգտվում են այն գերշահույթի փշրանքներից, որն ստանում է ճնշող ազգերի բուրժուազիան ճնշված ազգերի պրոլետարիատի շահագործումից և առհասարակ գաղութային թալանից։ Առաջ է գալիս բանվոր դասակարգի արիստոկրատիան, բուրժուազիայի սոցիալական հենարանը արևմտաեվրոպական և ամերիկյան բանվորական շարժման մեջ։

Գաղութային և կիսագաղութային երկրների ընդգրկումը կապիտալիզմի զարգացման մեջ անխուսափելի կերպով կառաջացնի և կհրահրի ազգային-ազատագրական, ազգային-ռևոլյուցիոն շարժումներ ճնշված ազգություններում, մեկ միլիարդ աշխատավոր գյուղացիություն և բանվորություն ունեցող գաղութներում։

Սակայն, Լենինի ուշադրությունից չի վրիպում նաև մեկ ուրիշ երևույթ։ Դա այն է, որ իմպերիալիստական բուրժուազիան ջանում է ճնշվող ազգերի մեջ պատվաստել ռեֆորմիստական շարժում։ Շահագործող և գաղութային երկրների բուրժուազիայի միջև տեղի է ունենում որոշ մերձեցում և, ինչպես Լենինն է նշել դեռ 1921 թ., շատ հաճախ ճնշված երկրների բուրժուազիան, թեև օժանդակել է, զորավիգ է եղել ազգային շարժմանը, բայց և միաժամանակ, իմպերիալիստական բուրժուազիայի հետ համաձայնության գալով, պայքարել է ռևոլյուցիոն շարժումների և ռևոլյուցիոն դասակարգերի դեմ։

Ի միջի այլոց այդ նկատառումով էր, որ Կոմինտերնի 2-րդ կոնգրեսը փոխեց «բուրժուական-դեմոկրատական» արտահայտությունը «ազգային-ռևոլյուցիոն» արտահայտությամբ, դրանով իսկ շեշտելով, որ կոմունիստական պարտիաները կօժանդակեն և կպաշտպանեն միայն այն ազգային-բուրժուական-ազատագրական շարժումները, որոնք իրոք ռևոլյուցիոն են, երբ այդ շարժման ներկայացուցիչները չեն խանգարի, չեն արգելակի ռևոլյուցիոն ոգով դաստիարակել և կազմակերպել շահագործվող լայն մասսաներին։

Ներկայումս իրականություն դարձած գաղութային սիստեմի փլուզումը և ազգային-ազատագրական շարժումների հաղթանակը ասիական և աֆրիկյան երկրներում՝ Հնդկաստանում, Բիրմայում, Ինդոնեզիայում, Ցեյլոնում, Միջին ու Մերձավոր Արևելքում, Մարոկկոյում, Գանում, Սուդանում և այլուր լիովին հաստատեցին Լենինի գիտական կանխատեսումը այդ շարժումների պատմական անխուսափելիության մասին։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱԶԳԵՐ. ՆՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Լենինը խոշոր ավանդ մտցրեց ազգային հարցի մարքսիստական տեսության մեջ, զարգացնելով սոցիալիստական ազգերի առաջացման, նրանց զար-

գացման բնույթի, նրանց պատմական հեռանկարների և փոխհարաբերությունների խնդիրները։

Պրոլետարական ռևոլյուցիայի ընթացքում վերացվում են ոչ թե ազգերն առհասարակ, որպիսի հերյուրանքներ տարածում էին և շարունակում են տարածել մեր հակառակորդները, մասնավորապես նացիոնալիստական տարրերը, այլ բուրժուական ազգերը վերափոխվում են սոցիալիստական ազգերի։

Դեռևս 1916 թ. Լենինը առաջին անգամ գործ է ածել «սոցիալիստական ազգ» տերմինը։ «Բուրժուազիայի լծից ազատվող աշխատավոր մասսաներն ամբողջ ուժերով կձգտեն դաշնակցելու և միաձուլվելու խոշոր ու առաջավոր սոցիալիստական ազգերի հետ»[1]։

Ինչու՞մն է արտահայտվում այդ վերափոխումը. առաջին՝ ազգերի դասակարգային կազմի փոփոխության մեջ, երկրորդ ազգի ղեկավար ուժի, կամ ազգի «տնօրինող ուժի» փոփոխության մեջ, երրորդ՝ ազգերի սոցիալ-տնտեսական շահերի, ձգտումների, հոգեկան-բարոյական դեմքի, խառնվածքի փոփոխության մեջ։ Բուրժուական ազգերի տնտեսական-քաղաքական շահերի հակամարտությունը տանում է դեպի ազգամիջյան ընդհարումներ ու պատերազմներ, դեպի «ազգային նեղ էգոիզմը», դեպի ազգային փոխադարձ անվստահություն ու ազգային հալածանքներ, դեպի «ազգային բացառիկություն» ու «ազգային սնապարծություն» և այլն, մի խոսքով տանում է դեպի թունոտ նացիոնալիզմն ու շովինիզմը։

Սոցիալիստական ազգերի տնտեսական-քաղաքական շահերը տանում են դեպի ազգերի եղբայրական բարեկամություն, դեպի կուռ միասնություն։

Պատմական հեռանկարը, անշուշտ, ազգային տարբերությունների վերացումն է, անէացումն, համաշխարհային սոցիալիստական միասնական կուլտուրայի և լեզվի (կամ լեզուների) ստեղծումը, առաջացումը։ Իսկ ե՞րբ կլինի դա։

Ազգային տարբերությունները,— նշում է Լենինը,— «պրոլետարիատի դիկտատուրան նույնիսկ համաշխարհային մասշտաբով իրագործվելուց հետո էլ կպահպանվեն շատ ու շատ երկար ժամանակ»[2]։

Ազգային տարբերությունների, ազգությունների անէացման, ձուլման և համաշխարհային միասնական սոցիալիստական կուլտուրայի ստեղծման, առաջացման միակ ուղին — դա սոցիալիստական ազգային կուլտուրաների, ազգային լեզուների զարգացումն է, նրանց անսպառ ծաղկումը։

Այս կապակցությամբ Լենինը զուգահեռ է անցկացնում պրոլետարիատի դիկտատուրայի և անդասակարգ հասարակություն ստեղծելու միջև։ Պատմական օբյեկտիվ ընթացքը գնում է դեպի անդասակարգ հասարակություն։ Մենք ձգտում ենք դեպի այդ անդասակարգ հասարակությունը։ Սակայն ի՞նչ ուղիով, ի՞նչ միջոցով.— զարգացնելով, ուժեղացնելով բանվոր դասակարգի դիկտատուրան։

Ինչպես անդասակարգ հասարակությունը կստեղծվի պրոլետարական դասակարգի տիրապետության ամրացման և զարգացման միջոցով, այնպես էլ համաշխարհային միասնական սոցիալիստական կուլտուրան ու լեզուն կամ

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, էջ 457։

[2] Նույն տեղում, հատ. 31, էջ 97—98։

լեզուները կստեղծվեն սոցիալիստական ազգային կուլտուրաների և լեզուների զարգացման ու ծաղկման միջոցով։ Սա է պատմության դիալեկտիկան։

Ջանալ «մագլցել» այդ բավական երկար անցողիկ դարաշրջանը դեկրետավորումով կամ ադմինիստրատիվ ձեռնարկումներով, այդ ապագան «արագացնելու» պատրվակի տակ ժխտել սոցիալիստական ազգերի ծաղկման պատմական անհրաժեշտությունը, դա՝ Լենինի դիպուկ բնորոշումով՝ ծաղրանկար է մարքսիզմի նկատմամբ։

Կոմունիստական պարտիան չորս տասնամյակների ընթացքում գնաց Լենինի գծած ուղիով և ձեռք բերեց աննախընթաց նվաճումներ սոցիալիստական ազգերի լեզուների, կուլտուրաների, տնտեսությունների զարգացման ասպարեզում։

Սովետական Միության ժողովուրդների հասցեին լուտանքներ թափող բուրժուական և նացիոնալիստական գաղափարախոսները և վարձու գրչակները թող փորձեն «իրենց» երկրներից բերել փաստեր, որոնք գեթ հեռավոր չափով նմանվեին սովետական ժողովուրդների կուռ ու եղբայրական միությանը և սովետական ժողովուրդների կուլտուրայի և տնտեսության վերելքի ու բարգավաճման ծաղկուն շրջանին։

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ԵՐԿՈՒ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Դեռևս 1920 թ. Լենինը բացահայտել է պրոլետարական ինտերնացիոնալիզմի երկու ըմբռնում. մեկը՝ մանրբուրժուական նացիոնալիստական, մյուսը՝ կոմունիստական։ «Մանր բուրժուական նացիոնալիզմը,— նշում է Լենինը,— ինտերնացիոնալիզմ է հայտարարում ազգերի իրավահավասարության ճանաչումը և միայն այդքանը..., անձեռնմխելի թողնելով ազգային էգոիզմը. այնինչ պրոլետարական ինտերնացիոնալիզմը պահանջում է, նախ՝ մի երկրում պրոլետարական պայքարի շահերը ենթարկել այդ պայքարի ընդհանուր շահերին համաշխարհային մասշտաբով, երկրորդ՝ բուրժուազիայի դեմ հաղթանակն իրագործող ազգից պահանջում է հանուն միջազգային կապիտալի տապալման մեծագույն ազգային զոհաբերությունների դիմելու ընդունակություն և պատրաստակամություն»[1]։

Անհրաժեշտ է ամենայն ուժգնությամբ ընդգծել Լենինի այս բնորոշման հույժ կարևոր, վճռական նշանակությունը պատմական ներկա իրադրության մեջ, համաշխարհային կապիտալիստական և համաշխարհային սոցիալիստական սիստեմների առկայության պայմաններում։ Գաղտնիք չէ, որ կապիտալիստական սիստեմի ղեկավար շրջանները ԱՄՆ-ի գլխավորությամբ, ըստ էության, մերժում են երկու սիստեմների խաղաղ գոյակցության դրույթը և պատրաստվելով նոր ոճրագործ պատերազմի՝ անցել են գաղափարական գրոհի կոմունիզմի դեմ և, առաջին հերթին, Սովետական Միության դեմ։ Այսպիսի պայմաններում անխուսափելի է, որ Սովետական Միությունը, ինչպես ժամանակին նշել է Լենինը, համախմբի իր շուրջը, մի կողմից, բոլոր սոցիալիստական երկրներին, և, մյուս կողմից, բոլոր ճնշված ժողովուրդների ազգային ազատագրական շարժումները։ Սահմանապատումը գնում է այս գծով, և ոչ թե գոյություն ունեցող «ռազմական բլոկների» գծով։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 170։

ՊԱՅՔԱՐ ԻՐԿՈՒ ՃԻՈՆՏԻ ՎՐԱ

Իր տեսական աշխատություններում, իր պրակտիկ ռևոլյուցիոն գործունեության ընթացքում, սկսած 1900-ական թվականներից մինչև մահը, Լենինը հետևողական, անհաշտ և սուր պայքար է մղել թե՛ ճնշող ազգերի և թե՛ ճնշվող ազգերի նացիոնալիզմի դեմ, թե՛ մեծապետական շովինիզմի և թե՛ տեղական նացիոնալիզմի արտահայտությունների դեմ։ Բավական է հիշատակել Լենինի պայքարը լիբերալ բուրժուազիայի գաղափարախոսների դեմ, ցարական իշխանության ասիմիլյատորական քաղաքականության դեմ, ռուսական մեծապետական շովինիզմի և միաժամանակ «Բունդի» նացիոնալիզմի դեմ (1903—1905)։ Նշանակալից է Լենինի պայքարը Ռուսաստանի մանրբուրժուական պարտիաների դեմ՝ ուկրաինական, լեհական նացիոնալիզմի, հայ «սպեցիֆիկների» դեմ և այլն։

Լենինի պայքարը ազգային հարցում միշտ էլ սուր բնույթ է կրել նրանց դեմ, ովքեր «ներսից»՝ ազգային հարցի հոռի ըմբռնումով վարկաբեկել են մարքսիզմը։

Այդպես հաճախակի է եղել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի պատմության մեջ,— ասում է Լենինը։ 90-ական թվականների էկոնոմիզմը ծաղրանկար էր մարքսիզմի նկատմամբ. 1908—1910 թթ. Ալեքսինսկու և ուրիշների 3-րդ դումայի բոյկոտը ծաղրանկար էր բոլշևիզմի նկատմամբ։ 1914—1916 թթ. «իմպերիալիստական էկոնոմիզմի» Պյատակովի և ուրիշների տեսությունը «ազգային հարցի չգոյության մասին» իմպերիալիզմի շրջանում ծաղրանկար էր մարքսիզմի նկատմամբ։ Ըստ Լենինի, առանց այդ ծաղրանկարների դեմ երկարատև պայքար մղելու «մենք չէինք ապահովի մեր հաղթանակները, որովհետև այդ հակամարքսիստական «տեսությունների» տարածումը «ամենալուրջ հարվածը կլիներ մեր ուղղությանը — և մեր պարտիային»[1]։

Ազգային ռևսպուբլիկաների կոմունիստների, նախկինում ճնշված ազգերի կոմունիստների ինտերնացիոնալ պարտականությունն է առաջին հերթին պայքարել տեղական նացիոնալիզմի արտահայտությունների դեմ։ Սակայն կարող են հարց տալ. որտեղի՞ց է այդ նացիոնալիզմը, քանի որ նրա սոցիալ-տնտեսական արմատները վաղուց են ոչնչացված, քանի որ նա սոցիալիստական արտադրական հարաբերություններում, սոցիալիստական ազգությունների փոխհարաբերություններում նույնպես հող չունի։ Դա ճիշտ է, բուրժուական նացիոնալիզմի սոցիալ-տնտեսական արմատները Սովետական Միության մեջ սոցիալիստական ազգային ռևսպուբլիկաներում ոչնչացված են վաղուց։

Սակայն չպետք է աչքաթող անել երկու հանգամանք. նախ՝ «ազգային էգոիզմը» և «ազգային սահմանափակությունը», ինչպես դա ժամանակին շեշտել է Լենինը, ամենախոր մանրբուրժուական նախապաշարումներն են։ Այդ նախապաշարումների անէացումը, վերացումը կրնթանա շատ դանդաղ և այդ նախապաշարումների վերացման թափը զգալիորեն պայմանավորված կլինի սոցիալական-տնտեսական կյանքի հիմնական փոփոխությունների թափով։

Երկրորդ՝ չի կարելի անտեսել կապիտալիստական շրջապատից տարբեր խողովակներով հասնող թունոտ պրոպագանդը և նրա ազդեցությունը մանրբուրժուական ազգայնական նախապաշարումներով տոգորված անկայուն

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 23։

տարրերի վրա և դրա հասցրած վնասը մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության գործում, ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում։

Ինչու՞մ կարող են արտահայտվել նացիոնալիզմի մնացուկները, մասնավորապես, իդեոլոգիական ճակատում։

Առաջին՝ ազգային անվստահություն սերմանելու մեջ Սովետական Միության սոցիալիստական ազգությունների եղբայրական համագործակցության մեջ ճեղքվածք առաջացնելու նպատակով, որն, իր հերթին, իմպերիալիստական ագրեսորների սոցիալական պատվերի կատարումը կնշանակեր։

Երկրորդ՝ ազգային սնապարծությունը, ազգային բացառիկությունը, որն ուղղակի ճանապարհներով տանում է դեպի շովինիզմը։

Երրորդ՝ պատմական անցյալի իդեալականացումը, պատմական անցյալում իրապես տեղի ունեցած դասակարգային հակասությունների և պայքարի անտեսումը, սքողումը, ինչպես նաև պատմական անցյալում գոյություն ունեցած և իր ժամանակի համար ռեակցիոն դեր խաղացած ֆեոդալական կամ բուրժուական գործիչներին ներկայացնելը որպես ազգային հերոսներ, նրանց մեծարելն ու փառաբանելը։

Երբեք չպետք է աչքաթող անել Լենինի ցուցմունքը յուրաքանչյուր ազգի մեջ գոյություն ունեցող երկու կուլտուրաների մասին։

Սոցիալիստական ազգային ռեսպուբլիկաների կոմունիստները, հրապարակախոսները, պատմաբանները, արվեստագետները վեր են հանում, մեծարում ժողովուրդների, նրանց ազգային կուլտուրաների դեմոկրատական, սոցիալիստական էլեմենտները, հպարտանում են առաջավոր դեմոկրատական սոցիալիստական գործիչներով և միաժամանակ պայքարում են ազգային նիհիլիզմի դեմ։

Շեշտելով սոցիալիստական սովետական ազգային ռեսպուբլիկաների կոմունիստների առաջնահերթ ինտերնացիոնալ պարտքը՝ անհաշտ ու հետևողական պայքար մղելը տեղական նացիոնալիզմի ամեն մի արտահայտության դեմ, Սովետական Միության Կոմունիստական պարտիան երբեք չի մոռանում Վ. Ի. Լենինի վերին աստիճանի ուշագրավ ու խորիմաստ ցուցմունքը, որը նա առաջադրեց պարտիային 1922 թ. դեկտեմբերի 31-ին իր «Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը» աշխատության մեջ. «Ազգային հարցի վերաբերյալ իմ աշխատություններում ես արդեն գրել եմ, որ ընդհանրապես նացիոնալիզմի վերացական հարցադրումը ոչ մի բանի պետք չէ։ Պետք է տարբերել ճնշող ազգի նացիոնալիզմը և ճնշված ազգի նացիոնալիզմը, մեծ ազգի նացիոնալիզմը և փոքր ազգի նացիոնալիզմը։

Երկրորդ, նացիոնալիզմի վերաբերմամբ պատմական պրակտիկայում գրեթե միշտ մենք, մեծ ազգի նացիոնալներս, մեղավոր ենք դուրս գալիս անսահման քանակությամբ բռնության մեջ, և նույնիսկ ավելին — մեզ համար անընկատելիորեն գործադրում ենք անսահման քանակությամբ բռնություններ ու վիրավորանքներ»[1]։

Պրոլետարական ինտերնացիոնալիզմի հստակ դիրքերից մեծ Լենինը մեր պարտիային հետևյալ ավանդն առաջադրեց.— նախկինում ճնշող կամ մեծ ազգի կոմունիստների կողմից «ինտերնացիոնալիզմը պետք է կայանա ոչ միայն ազգերի ձևական հավասարությունը պահպանելու մեջ, այլև այնպիսի

Վ. Ի. Լենին. Ազգային և ազգային-գաղութային հարցի մասին, էջ 730։

անհավասարության մեջ, որը ճնշող ազգի, մեծ ազգի կողմից հատուցեր այն անհավասարությունը, որ փաստորեն ստեղծվում է կյանքում։ Ով չի հասկացել այս, նա չի հասկացել իրոք պրոլետարական վերաբերմունքը դեպի ազգային հարցը, նա, ըստ էության, մնացել է մանր-բուրժուական տեսակետի վրա, ուստի և չի կարող ամեն րոպե չգլորվել դեպի բուրժուական տեսակետը»[1]։

Սովետական Միության Կոմունիստական պարտիան աննկուն կերպով հավատարիմ մնաց Լենինի այս ավանդին և անցած տասնամյակների ընթացքում՝ գլխավորելով, կազմակերպելով ու ոգեշնչելով ռուս պրոլետարիատի, ռուս մեծ ժողովրդի ջանքերն ու ձեռնարկումները ազգային ռեսպուբլիկաների ժողովրդական տնտեսության և կուլտուրայի աննախընթաց զարգացման ասպարեզում, կարողացավ «փոխհատուցել այն անվստահությունը, այն կասկածամտությունը, այն վիրավորանքները, որ պատմական անցյալում նրանց (այսինքն այլազգիներին, նախկինում ճնշված փոքր ժողովուրդներին—Ա. Ե.) հասցրել է «մեծապետական» ազգի կառավարությունը»[2]։

Դա իր փայլուն արտահայտությունն է գտել ազգային ռեսպուբլիկաների և բուն Սովետական Ռուսաստանի զարգացման տեմպերի մեջ. Սովետական Ռուսաստանի արդյունաբերության արտադրանքը, 1913 թ. համեմատությամբ, 1956 թ. ավելացել է 30 անգամ, այդ թվում ծանր արդյունաբերությունը՝ 42 անգամ, Ղազախստանինը՝ համապատասխան կերպով 36 և 97, Վրացական ռեսպուբլիկայինը՝ 29 և 80, Կիրգիզիայինը՝ 42 և 717, Տաջիկիստանինը՝ 27 և 1049, Հայաստանինը՝ 45 և 135։ Այդ նույն պրոցեսը անցած տասնամյակներում տեղի է ունեցել կուլտուրայի, ժողովրդական լուսավորության, առողջապահության, արվեստի, գիտության ու կադրերի պատրաստման ասպարեզներում։

Համաշխարհային կապիտալիստական և սոցիալիստական սիստեմների մրցման ասպարեզում սոցիալիստական սիստեմը ոչ թե գրքերում, այլ պատմական ռեալ իրականության մեջ հայտնաբերեց իր գերազանցությունը նաև ազգային հարցի լուծման բնագավառում։ Այդ են վկայում սովետական սոցիալիստական ազգային ռեսպուբլիկաների այսօրվա ծաղկուն էկոնոմիկան ու կուլտուրան, որին հասել են այդ ռեսպուբլիկաները ռուս մեծ ժողովրդի օժանդակությամբ ու օգնությամբ։

* * *

Ազգային և ազգային-գաղութային հարցերին նվիրված Լենինի աշխատությունների ուսումնասիրությունը մեր պարտիական, սովետական, գիտական կադրերին կգինի ամենահաղթ լենինյան ուսմունքով՝ հարվածելու համար ազգային հարցի հակամարքսիստական տեսությանն ու պրակտիկային և խոշոր գործոն կհանդիսանա մեր երիտասարդության և աշխատավոր մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության գործում։

---

[1] Վ. Ի. Լենին. Ազգային և ազգային գաղութային հարցի մասին, էջ 730—731։
[2] Նույն տեղում, էջ 731։